ւիրելու հեթանոսները որ ընդունին քրիստոնէական կրօնը, եւ արտօնութիւն մը առաքելոց՝ քարոզելու Աւետարանը հեթանոսաց մէջ ալ։ Վեսպասիանոսի և Տիտոսի արշաւանքները տարածուեցան նաև Յոպպէի վրայ. քաղաքը հիմնայատակ կործանուեցաւ, քրիստոնէից հետ հրեայք ալ ցրուեցան, և երկու դար հոն կ'իշխէր միայն աւերակաց կոյտ մը։ Յոպպէ յետոյ վերաշինուեցաւ և բնակչութիւնը վերանորոգուեցաւ և քրիստոնէութիւնը հոն վերստին ծաղկեցաւ. կանուխէն հաստատուած էր հոն եպիսկոպոսական աթոռ մը։ Ե. դարէն մինչեւ Է. դար ժողովներու շատ մը ստորագրութեանց մէջ կը տեսնուին Յոպպէի արքեպիսկոպոսներուն անունները։ Ուխտաւորները Յոպպէի սուրբգրական յիշատակներէն հրապուրուած՝ շատ անգամ կեսարիայէն Երուսաղէմ ուղղակի ճանապարհէն չեղելով Յոպպէ այցելութեան կու գային. Հռովմայեցի Բաւլա և իր աղջիկը Եւտոքսիա ընկերակցութեամբ Յերոնիմոսի փափաքեցան տեսնել այն նաւահանգիստը՝ ուրկէ Յովնան նաւ նստած է։ 500ին Վիրգիլիոս քահանան, և 530ին Թէոտոսիոս Ս. Պետրոսի յիշատակին և Տաբիդայի յարութեան համար կ'այցելեն Յոպպէ։ 570ին Բլէզանսի Անտոնինոս Յոպպէի մէջ կը փնտռէր նոյն կնոջ գերեզմանը։ 637 ին Արաբները Յոպպէն այս թուականէն սկսեալ առ հասարակ կը կոչեն Եաֆահ, որ Ս. Երկրին գլխաւոր նաւահանգիստը կ'ըլլայ։ Վիլլիպալտ (723–6) հոն այցելեց եւ տեսաւ «այն Ս. Պետրոս առաքեալի եկեղեցին՝ ուր յարութիւն առաւ այրի Այծեմիկը, Պետրոսի աղօթքով»։ Թէեւ այն ատեն քաղաքը շատ փոքր էր, սակայն ան եղաւ Պաղեստինի եւ Ռեմլէի մայրաքաղաքին մեծ չուկան, ինչպէս կը նկարագրեն Եագուպի (891) և Էլ–Մուգատտասի (985)։

2. Յոպպէն Խաչակրաց ժամանակ եւ անոր եկեղեցիները.

Խաչակիրները Յոպպէն գրաւեցին առանց կռուելու. բայց քաղաքը քանդուած էր. 1100էն սկսեալ Կոտըֆրայ Տը Պուլյեան՝ Բիզայի ծովային զինուորներուն օգնութեամբ վերաշինեց Յոպպէի պարիսպները։ Յոպպէն դարձաւ եպիսկոպոսական քաղաք